

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐՑ  
ՏՕՆԻՆ ՕՐԸ ԵՒ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ  
ՊԸՐՊԵՆՔԻ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ, ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Սրբոց Վարդանանց Տօնին օրը՝ Հինգշաբթի, Փետրուար 11ի երեկոյեան Պըրպէնքի Հայց. Եկեղեցւոյ մէջ, Առաջնորդարան, Սուրբ Պատարագ մատոյց եւ քարոզեց Դոկտ. Արժ. Տ. Զաւէն Աւագ Քինյ. Արզումանեան: Արարողութեանց հանդիսապետեց Թեմակալ Առաջնորդ Սրբազան Հայրը: Սուրբ Պատարագի աւարտին Սրբազան Հօր հանդիսապետութեամբ կատարուեցաւ Հայրապետական Մաղթանք:

Սուրբ Պատարագի աւարտին Պըրպէնքի Ծուխի երիտասարդները, Արժ. Տ. Խաժակ Քինյ. Շահպազեանի գլխաւորութեամբ, Վարդանանց Հերոսամարտի կարճ ներկայացումով հանդէս եկան խոր տպաւորութիւն ձգելով հաւատացեալներուն վրայ: Սրբազան Հայրը իր ոգեւորիչ խօսքերով գնահատեց երիտասարդութեան նուիրեալ ծառայութիւնները եւ յաջող հանդէսը, որ պատիւ կը բերէ իրենց, եկեղեցւոյ եւ ծնողներուն: Հոգեկան մխիթարութիւն ստեղծած այս ներկայացումէն ետք, հաւատացեալները իրենց շնորհաւորութիւնները յայտնեցին անոնց: